րայ։ Ես ծառայից իմացայ՝ որ այն սենեակում ուր ինձ տեղաւորեցին տեսիլներ են երեւում։ Չեմ կարող արտայայտել թէ ինչպէս ուրախացայ՝ հաստատ հաւատալով՝ որ կարմիր սենեակը հաղորդակցութիւն ունի այն ստորերկրեայ անցքերի հետ։ Ես զննեցի բոլորը մանրամասնաբար և վերջապէս մահճակալի տակ գտայ ցած իջնելու դուռը։ Զգուշութեամբ սանդուղից ցած իջնելով ես գիտեցի բոլոր անցքերը և նշաններից իմացայ՝ որ սանդուղի տակ թաղած պիտի լինէր Մարգարիտան։ Մասամբ արդարացած կասկածներից վախեցած՝ ես վերադարձայ կարմիր սենեակը վճռելու ինչ անելիքս։ Ես շտապեցի Լոնդոն գործս տեսնելու։ Լոնդոնից խոստացան խուզարկու ուղարկել՝ որին ես ներս պիտի բերէի ստորերկրեայ անցքով։ Այս բոլորը կարգադրված էր՝ երբ ես ձեզանից բաժանվելով գնացի Ննջարան։ Մենք գիշերը աշխատեցինք՝ քանդեցինք փորը՝ գտանք այնտեղ իմ անբաղդ քրոջ մարմինը․ Նորա մատի վերայ մնում էր դեռ եւ այն թանկագին մատանին՝ որը ես ուղարկել էի Նորան արտասահմանից իբրև հարսանիքի ընծայ։ Խուզարկուն այն մտքի էր՝ որ այս ապացոյցները բաւական էին Արտուր Ուայիտնի գործերի քննութիւնը սկսելու՝ և խորհուրդ տուաւ ինձ գնալ ուղղակի Լոնդոն երդուածների դատարանը։ Ուստի ես իսկոյն գնացի իջեւանը՝ ինչպէս և անցեալ գիշերը՝ խուզարկուին պատուիրելով ձեզ յայտնելու այն զարհուրելի յանցանքը և բացատրել ձեզ իմ երկրորդ բացակայութեան պատճառը։ Այժմ պարզ հասկանալի է՝ որ Ուայիտնը՝ սաստիկ կասկած տանելով իմ մասին՝ գնացել է գիտելու ստորերկրեայ անցքը՝ և տեսնելով որ իւր յանցանքը և գաղտնիքը յայտնված են՝ մտել է կարմիր սենեակը և սխալմամբ սպանել է խուզարկու Հինտոնին՝ կարծելով թէ ինձ է սպանում՝ իւր յանցանքը յայտնելու համար։

Սորանից յետոյ զարմանալի չէ՝ որ գնդապետ Լէյկյարդը ծախեց մենաստանը առաջին խնդրողին։ Մարիոնն էլ շուտով ամուսնացաւ Ջօն Մորդաունտի հետ և արդէն քսան և հինգ տարի է որ բաղդաւոր ապրումեն՝ որքան այս հնարաւոր է այս անհաստատ աշխարհում։

Մ․ Տ Ա․

Ախալցխայի հայ հոգեւորականների ընթերցարանի երկամեայ հաշիւը։

1879 ամի մայիսի 1 ին Ախալցխայի հայ հոգեւորականների ընթերցարանի անդամները․ կանոնադրութեան ԻԲ․ յօդուածի համաձայն․ ժողովվելով ընթերցարանում քննեցին նորա երկու տարեկան․ այն է 1877 Թ․ մայիսի 1 ից մինչեւ ց1ն մայիսի 1879 Թ․ հաշիւները։

| ՄՈՒՏՔ | Ռ․ | Կ․ | ԾԱԽՔ | Ռ․ | |
|---|---|---|---|---|---|
| Ա․) Երկու տարվայ ընթացքում ստացել է ընթերցարանը անդամներից բաժանորդագին 844 ր․ 70կ․ | | | Ա․ Ընթերցարանը իւր հաշուով ձեռք է բերել 48 օրինակ գիրքեր, որոնց արժողութիւնն է . | 77 | 44 |
| Բ․) Նուէր ստացել է հետեւեալ անձերից . | | | Բ․) Ընթերցարանը իւր հաշուով նմանապէս ստացել է հետեւեալ լրագիրները եւ ամսագիրները․ | | |
| Եղիայ ա․ ք․ Համբարձումեանից | 1 | | Մեղու Հայաստանի . . | 14 | |
| Մարտիրոս ք․ Մեծատուրեանից | 1 | | Մշակ . . . . | 20 | 2 |
| Մեսրոպ ք․ Կանցեանից . | 1 | | | | |

| | | |
|---|---|---|
| Կարապետ ք. Տ. Գրիգորեանից | 1 | |
| Համբարձում ք. Զրպետեանից | | 50 |
| Աբրահամ ք. Ղազարեանից . | 2 | |
| Մկրտիչ ք. Գասպարեանից . | 1 | |
| Մովսէս Սամուէլեանից . | 1 | |
| Աղէքսանդր Ալլահվերդեանից . | 5 | |
| Մելքոն Զիլինգարեանից . | 2 | |
| Յովակիմ Գեղամեանի ձեռամբ | 84 | 15 |
| Նիկողայոս Զիկանեանից . | 1 | |
| Յակոբ Ջօրանեանից . . | 1 | |
| Առաքել Մելքոնեանից . | 2 | |
| Մկրտիչ Ճարտկեանից . . | 2 | |
| Աղէքսանդր Սարայտարեանից . | 1 | |
| Դաւիթ Բուբուլեանից . . | 1 | |
| Գրիգոր Տ. Միքայէլեանից . | 1 | |
| Տիգրան Ճարտկեանից . . | 1 | |
| Յակոբ Ղանթարճեանից . | 1 | |
| Պօղոս Շարտօղլեանից . | 1 | |
| Երիցուհի Թագուհի Համբարձումեանից . . . . | 10 | |
| Տ. Զմրուխտ Յարութիւնեանից | 1 | |
| Տ. Փեբրոնիա Վարդանեանից | 1 | |
| Ընդ ամենը | 418 | 75 |

Գ.) Նոյնպէս հետեւեալ անձանցից նուէր ստացել է սոյն գրքերը .

| | օր. |
|---|---|
| Կարապետ ք. Տ. Գրիգորեանից . | 3 |
| Յովակիմ Գեղամեանից . . | 1 |
| Տիգրան Ճարտկեանից . . | 1 |
| Առաքել Տ. Յակոբեանից . . | 1 |
| Մկրտիչ Ճարտկեանից . . | 3 |
| Աղէքսանդր Սարայտարեանից . | 24 |
| Յովհաննէս Վանանդեանից . | 3 |
| Մկրտիչ Խաչատրեանից . . | 2 |
| Պետրոս Պռօշեանից . . . | 1 |
| Բժիշկ Աւետիք Բաբայեանից . | 1 |
| Մկրտիչ Տ. Մարգարեանից . | 1 |
| Ս. Պուլամիրեանից . . | 1 |
| Ընդ ամենը | 42 |

Դ.) Այլեւ նուիրաբար ստացուել է Աբրահամ քահանայ Ղազարեանից «Արարատ ամսագիրն 1877. 1878 թուերի»

| | | |
|---|---|---|
| Մասիս . . . . | 20 | |
| Մանկավարժական թերթ. . | 6 | |
| Հայկական Աշխարհ . . | 3 | |
| Փորձ . . . . | 20 | |
| Тифлисскій Вѣстникъ . . | 12 | |
| Голосъ . . . . | 34 | |
| Дѣло . . . . | 16 | |
| Всемірная Иллюстрація . . | 16 | |
| Огонекъ . . . | 5 | |
| Обзоръ . . . . | 5 | |
| Գ.) Ընթերցարանի համար թղթի, գրչի, պահարանի, վառելի փայտի, գրքեր կազմելու եւ այլն ծախք է եղել ընդ ամենը երկու տարվայ ընթացքում . . | 96 | 90 |
| Գումարն է | 345 | 42 |
| Մնում է առ ձեռն պատրաստի դրամ . . . | 47 | 93 |
| Եւ բացի սորանից ապառիկ կայ | 25 | 40 |
| Գումարն | 73 | 33 |

Ընթերցողութեան Եղէայ առաջ փառաց
Համբարձման
Գանձարան կարդալ փառաց Տէր
Գրիգորեան։

## ԱՐՄԱՒԻՐԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳԻՐ.

Այս երկրորդեան բեւեռաձեւ արձանագիրս, որ այս օրերս պատահելով Արմաւիր օրինակեցի Արմաւիրեան բլրի աշտարակի գրան ճակատի նեղ և երկայն քարի վերայից, որն գլորվելով ընկել էր բլրի ստորոտը, որ և բերելով Ս. Էջմիածին տարի 1870 թուին Արմաւիր գտնուած մեծ արձանաքարի մօտ, որ յարմարեցրած է ճեմարանի հարաւային հանդէպն, եթէ կարելի է տպագրելով Արարատ ամսագրիդ մէջ հրատարակել ի գիտութիւն հետաքրքիր գիտնականների, որոնց և հրաւիրել, երբ յաջողին կարդալ, թարգմանութիւնն հասցնեն խմբագրութեանդ ի հրատարակութիւն, նմանապէս և ցայսօր քանի տեղ Արարատեան նահանգի մէջ գտ-